

**Դ Ա Տ Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր # 33.2**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳԵՊԱՐՏԱՍԵՆՏՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
(ԳԴ-2.2-33.2)**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) իրավական վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ, իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետի պաշտոնն ընդգրկվում է դատական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետին «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Դեպարտամենտի ղեկավարը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

**II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետն ունի իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներ:

5. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է մյուս բաժնի պետը կամ այլ դատական ծառայող:

6. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը Վարչության պետի կամ մյուս բաժնի պետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

7. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը՝

ա) պատասխանատու է Բաժնի ընթացիկ գործունեության կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման համար.

բ) կատարում է Դեպարտամենտի ղեկավարի, Դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Գեպարտամենտի, Վարչության և Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը, Բաժնի աշխատողներին տալիս է ցուցումներ և հանձնարարություններ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

9. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը՝

ա) Հայաստանի Հանրապետության դատական համակարգում շփվում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատավորների հետ.

բ) Գեպարտամենտի ներսում շփվում է Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի տեղակալների, Գեպարտամենտի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

գ) Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ Գեպարտամենտից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, քննարկումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

դ) Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ ներկայացնում է Բաժինն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում:

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

10. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետն իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ

մասնակցում է Դեպարտամենտի, Վարչության և Բաժնի առջև դրված գործառնություններից բխող մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

VI. ԳԻՏԵԼԻԶՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը՝

ա) ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, դատական (պետական) ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա դատական ծառայության ստաժ կամ դատական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:

բ) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

դ) ունի գրական հայերենի պատշաճ իմացություն:

ե) տիրապետում է առնվազն մեկ օտար լեզվի:

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետը՝

ա) Դեպարտամենտի ղեկավարի, Դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ կամ Դեպարտամենտի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է Դեպարտամենտի գործունեության կոնկրետ ոլորտի հետ կապված աշխատանքները:

բ) ապահովում է Դեպարտամենտի ղեկավարի, Դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությունների կատարումը, մասնակցում է նրանց մոտ անցկացվող խորհրդակցություններին, հանդիպումներին, քննարկումներին և բանակցություններին:

գ) Բաժնի գործառնությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև իր առջև դրված խնդիրների իրականացման նպատակով կատարում է ուսումնասիրություններ, հրավիրում է խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մասնագետների և փորձագետների:

դ) Գեպարտամենտի ղեկավարի, Գեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, դատարանների նախագահների խորհրդի քարտուղարի և Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն, իր իրավասության շրջանակներում ներկայացնում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր.

ե) ըստ անհրաժեշտության ներկայացնում է առաջարկություններ՝ կոնկրետ աշխատանքների կատարմանը մասնագետներ, փորձագետներ և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

զ) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Բաժնի դատական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

է) իրականացնում է Բաժնի անմիջական ղեկավարումը և իրեն ենթակա աշխատողների միջև նրանց լիազորություններից բխող աշխատանքի բաշխումը, ապահովում է աշխատանքային կարգապահությունը.

ը) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի կազմման, ինչպես նաև ներկայացված նախագծերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ եզրակացությունների ներկայացման աշխատանքների իրականացումը.

թ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումների վերաբերյալ դիրքորոշումների ներկայացման աշխատանքների իրականացումը.

ժ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների, ներպետական և միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանության վերաբերյալ տեղեկանքների և եզրակացությունների նախապատրաստման աշխատանքների իրականացումը.

ժա) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է Գեպարտամենտի անունից կնքվող պայմանագրերի նախագծերի իրավական փորձաքննության աշխատանքների իրականացումը.

ժբ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է դատարանում, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմինների հետ հարաբերություններում Գեպարտամենտը ներկայացնելու հետ կապված աշխատանքների իրականացումը.

ժգ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է դատական հանձնարարությունների փոխանցման հետ կապված աշխատանքների իրականացումը.

ժդ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է քաղաքացիների դիմումների պատասխան-գրությունների նախագծերի պատրաստման աշխատանքները.

ժե) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների, ենթօրենսդրական և գերատեսչական ակտերի շտեմարանի, Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի ժամանակագրական

օրինակների, ինչպես նաև՝ գրադարանում առկա գրականության հաշվառման աշխատանքների իրականացումը.

ժգ) Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է Դեպարտամենտում ուսումնական և արտադրական պրակտիկայի անցկացման աշխատանքների իրականացումը.

ժե) իրականացնում է Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

13. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետն ունի Օրենքով, Դեպարտամենտի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

14. Վարչության պետի տեղակալ, Բաժնի պետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: